Արմավիրի մարզի Ծաղկունք գյուղական համայնքի ղեկավարի 2012թ. 1 - ին կիսամյակի գործունեության հաշվետվություն

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

2012 թվականի հունվար-հունիս ամիսների ընթացքում գյուղապետարան է դիմել համայնքի թվով 23 բնակիչ գրավոր դիմումներով, որոնց տրվել է լիարժեք պատասխան: Գյուղապետարանը կադաստրի տարածքային ստորաբաժանումում,անձնագրային բաժնում, նոտարական գրասենյակում ,Ք.Կ.Ա.Գ բաժնում միջնորդությամբ հանդես է եկել համայնքի բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով: Կայացել է համայնքի ավագանու 7 նիստ, որոնք ներկայացվել են մարզպետարան: Գյուղապետի կողմից արձակվել է ինը կարգադրություն, ընդունվել տարբեր բնույթի 31 որոշումներ, որոնք նույնպես ներկայացվել են մարզպետարան:
Համայնքում կազմակերպվել են միջոցառումներ «մարտի 8-ի», «մայիսի 28-ի» կապակցությամբ, ինչպես նաև համայնքում ավարտական դասարանի երեխաներին վերջին զանգի կապակցությամբ տրվել է տրվել է նվերներ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Օրենքով սահմանված կարգով ապահովվել և տնորինվել է համայնքի բյուջեի մուտքերը և նպատակային օգտագործումը: Հաշվետու ժամանակաշրջանում հավաքագրվել և մուտքագրվել է գույքահարկի մասով 858.4 հազ. դրամ հողի հարկի մասով 1539.1 հազ դրամ, վարձակալական հողի մասով 12.87 հազ. դրամ տեղական տուրքերի մասով 69.7 հազ. դրամ:
Գյուղապետարանը աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի, սոց. վճարների և եկամտահարկի գծով հաշվետու ժամանակաշրջանում ոչ մի պարտք չունի:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Աշխատանքներ են տարվում նախկինում զին ծառայությունից խուսափողների հայտնաբերման և զինկոմիսարիատ ներկայացնելու գործում : Գյուղապետարանը տարածքային զինկոմիսարիատից գարնանային զինակոչի համար ստացած Ծանուցագրերը ժամանակին հասցնում է հասցեատիրոջը և հետևում, որ ժամանակին ներկայանան զինկոմիսարիատ: Ուշադրության կենտրոնում են պահվում պատերազմի վետարանների սոցիալական խնդիրների լուծումը աշխատանքներ են տարվում երիտասարդության շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակչական գործում:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Անմիջական վերահսկողություն է սահմանվում համայնքի հողօգտագործողների նկատմամբ օգտագործման ուղղությամբ: Բույսերի պաշտպանության հարցում մասնագետների մասնակցությամբ տրվել է անվճար խորհրդատվություն:

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ և ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Համայնքում կատարվում է աղբահեռացում շաբաթը մեկ անգամ , որի համար կնքվել է աշխատանքային պայմանագիր; համայնքի ղեկավարի կողմից խիստ հսկողություն է սահմանվել խմելաջի խողովակաշարերի վրա վթարների և դրանց վերացնելու ուղղությամբ: Իրականացվել է համայնքի առուների ճահճուտից և կանաչապատումից մաքրման աշխատանքներ:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Գյուղապետարանի կողմից կատարվել է համայնքի փողոցների ավազապատման և հարթեցման աշխատանքներ:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Առևտրի և սպասարկման բնագավառում հսկողություն է սահմանվել արագ փչացող սննդի և առևտրային կանոնների խախտման նկատմամբ , արգելվել է փողոցային առևտուրը, բացառվել է փողոցային վառելանյութի վաճառքը:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ և ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Երիտասարդների հետ տարվում են բացատրական աշխատանքներ կրթության, մշակույթի վերաբերյալ `գիտելիքների ավելացման ուղղությամբ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Գյուղպետարանի և բուժ անձնակազմի մասնակցությամբ հսկողություն է սահմանվել խմելաջրի վթարների խորքային հորերի քլորացման և կենցաղային աղբի հեռացման հարցում: Բացատրական աշխատանքներ են տարվում համաճարակների կանխարգելման նպատակով, համայնքում հրավիրվում են բժիշկ մասնագեներ՝ ազգաբնակչությանը ստուգելու, համապատասխան բուժումներ և խորհուրդներ տալու նպատակով :
Սոցիալապես անապահով թվով 13 ընտանիքների տրվել է դրամական օգնություն 500.0 հազ. դրամ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Աշխատակազմի միջոցով կազմակերպվել և վիճակագրական վարչությանն է ներկայացվել համայնքում բերքահավաքի կերերի կուտակման աշնանացանի և ցրտահերկի բարձրացման ընթացքի մասին հաշվետվությունները: Համայնքում համաձայն գրաֆիկի կազմակերպվում է անասունների և թռչունների հակահամաճարակային պատվաստումներ:

Ծաղկունք համայնքի
ղեկավար՝ Դ Կարապետյան